

## ՈՒՍՈՒՅՍԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

Իններորդ հաղորդում

### Նոնենիների երկիր

Գրվածքների ընթերցում. Երկ Օր 8:8, Ելգ 28:33-34,  
Գ Թզ 7:18-20, Երգ 4:3բ, 13ա, Բ Պտ 1:3-8

- I. **Աստվածաշնչում նոները խորհրդապատկերում են կյանքի լեցունությունը, կյանքի առատությունն ու գեղեցկությունը և կյանքի հարստության արտահայտությունը՝ Երկ Օր 8:8, Ելգ 28:33-34, Գ Թզ 7:18-20, Երգ 4:3բ, 13ա.**
  - A. Հասած նույն իր հատիկներով կյանքի լեցունության և կյանքի առատության ու գեղեցկության տպավորություն է քողնում:
  - B. Եթե Քրիստոսին փորձառարար ապրենք ու վայելենք որպես ցորենի, գարու, որրի և թզենու, Քրիստոսի կյանքի առատությունը մեզ հետ կլինի, և Քրիստոսի գեղեցկությունը կլինի մեր տարբերանշանը. սա է Քրիստոսի՝ որպես նոան փորձառությունը:
  - C. Եթե կյանքում հասունանանք, կդառնանք նոներ՝ Կղս 2:19, 1:28.
    1. Որքան շատ պատրաստակամ լինենք, որ Տեր Հիսուսն իշխի մեզ վրա ու ասհմանափակի մեզ՝ ելնելով Նրա հանդեպ մեր ունեցած սիրուց, այնքան ավելի շատ կաճենք կյանքում՝ խխ. 13, 28:
    2. Եթե տեսնենք Քրիստոսի համարովանդակ և ընդարձակ լինելու տեսությունը, մեր ողջ եռությունը կկենտրոնացնենք այս Քրիստոսի վրա, և Նա կլցնի ու կհազեցնի մեզ՝ խխ. 12, 2:9, 16-17, 3:10-11.
      - a. Մեր եռությունը զբաղված կլինի հսկայական, անքննելիորեն հարուստ, ընդարձակ Քրիստոսով՝ Եփս 3:18:
      - b. Մեզ համար ապրելով կլինի այն Քրիստոսը, ով մեզ տիրում, լցնում և զբաղեցնում է Իրենով՝ Փլպ 1:20-21ա, Եփս 3:17ա:
    3. Քրիստոսի մեջ չափահաս լինել նշանակում է Քրիստոսով լցվել, հագենալ ու ներծծվել՝ Կղս 1:28.
      - a. Սա նշանակում է, որ մեր եռության ամեն մի մասը զբաղված է Քրիստոսով՝ Եփս 3:17ա, Գղու 4:19:
      - b. Սա է կյանքի աճը և կյանքի հասունությունը, Քրիստոսին փորձառարար ապրելու արդյունքը, որ բացահայտված է Կողոսացիներին ուղղված քղթում՝ 2:9, 19, 3:4, 10-11:
- II. **Նոներն ու ոսկե զանգերը քահանայապետի պատմուճանի ներքեկի մասում էին, որը խորհրդապատկերում է եկեղեցին՝ Ելգ 28:33-34.**
  - A. Եկեղեցին իր մարդկայնության մեջ պետք է կյանքով լեցուն լինի. սա է թեհեղից պատրաստված նոան նշանակությունը:
  - B. Եկեղեցին մարդկայնություն ունի կյանքի լեցունությունն արտահայտելու համար, ինչպես նաև աստվածայնություն՝ ոսկե զանգեր հնչեցնելու համար.
    1. Կյանքի լեցունությունն արտահայտվում է եկեղեցու մարդկայնության մեջ, բայց նախազգուշացման ձայնն արտահայտվում է եկեղեցու աստվածայնության մեջ (ոսկե զանգերի):

## ՆՈՆԵՆԻՆԵՐԻ ԵՐԿԻՐ

2. Մենք նախ՝ ունենք կյանքի լեցունության արտահայտությունը, իսկ հետո՝ ոսկե զանգերի հնչելը, այսինքն՝ եկեղեցու աստվածայնությունից խոսելը:
3. Մեր մարդկայնության մեջ արտահայտված կյանքի գեղեցկությունը և ոսկե զանգերից բխող աստվածային ձայնը պատշաճ եկեղեցական կյանքի նշաններ են:

### III. Տաճարի սյուների գագաթին եղող խոյակները շրջապատող երկու հարյուր նոները խորհրդապատկերում են կյանքի հարստությունը՝ **Գ Թգ 7:18-20, Բ Մնց 3:15-16, Երմ 52:22-23.**

- A. Նրանք, ովքեր դատում են իրենց (քրոնօ) և իրենց ոչինչ համարում, ի վիճակի կլինեն խառը և բարդ իրավիճակում (հյուսկեն աշխատանքի ցանցերն ու շղթայական աշխատանքի պսակները) լիարժեք պատախանատվություն կրելու, քանի որ ոչ թե ինքնուրույն են ապրում, այլ Աստծու հանդեպ հավատքով (շուշանագործը). ուստի նրանք երկուհարյուրապատիկ արտահայտում են կյանքի հարստությունը (նոները)՝ **Դ Թգ 7:15-22:**
- B. Յուրաքանչյուր հարյուր նոից իննատնվեցը բաց էին և ուղղված էին դեպի օդ, իսկ չորսը՝ ծածկված՝ Երմ 52:22-23.
  1. Կյանքի հարստության արտահայտությունը հավիտյան ավարտված է, հարույրան քարմության մեջ է, ինչպես նաև Հոգու մեջ:
  2. Այն, որ ամեն հարյուր նոից չորսը քարցված էին, ցույց է տալիս, որ մեր բնական էությունը, մեր բնական կյանքն ու մեր «ես»-ը պետք է քարցնել:
  3. Երբ մեր բնական էությունն անհետանում է, մենք ունենում ենք իննատնվեց նոները՝ Քրիստոսի կյանքի հարուստ արտահայտությունը հոգևոր օդի իրականության մեջ:

### IV. Ըստ Երգերոցի՝ նոները հոգևոր նշանակություն ունեն անհատ հավատայալի՝ Քրիստոսի հետ ունեցած սիրո հաղորդակցության զարգացող փորձառության մեջ՝ **4:3բ, 13ա, 6:7, 11, 7:12, 8:2բ.**

- A. «Այտերդ նոան կեսի նման են քո քողի տակ»՝ 4:3բ, 6:7:
- B. «Ես ընկույզենիների պարտեզն իջա՝ հովտի քարմությունը տեսնելու, տեսնելու, թե բողբոջե՞լ է արդյոք որքատունկը, թե ծաղկե՞լ են նոները»՝ խ. 11:
- C. «Առավոտ կանուխ վեր կենանք ու գնանք այգիները. տեսնենք, թե որքատունկը բողբոջե՞լ է, ծաղիկը բացվե՞լ է, նոնենիները ծաղկո՞ւմ են. այստեղ իմ սերը թեզ կտամ»՝ 7:12:
- D. «Զեզ համեմած զինի կխմեցնեի իմ նոան հյութից»՝ 8:2բ:
- E. «Զո ոստերը նոնենիների մրգաստան են՝ ընտիր պտուղներով»՝ 4:13ա.
  1. Երբ Քրիստոսը վայելում է Իր սիրուհուն, նա փակ պարտեզ է, որն ամեն տեսակ բույսեր է աճեցնում՝ տարբեր գույներով՝ որպես ներքին կյանքի տարբեր արտահայտություններով, և բուրմունքների

## ՈՒՍՈՒՅՍԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

բազմազանությամբ՝ որպես հասուն կյանքի հարուստ արտահայտությամբ՝ խիս. 13-14:

2. Սա Տիրոջ համար դառնում է սիրուիո գեղեցկությունը. Ջրիստոսի սիրուիին այժմ հարուստ է կյանքով, պտուղներ է տալիս՝ սմուցելու և թարմացնելու համար, անուշ բուրմունքներ արձակում և գեղեցիկ գույներ ցուցադրում Ջրիստոսի վայելքի համար:

### V. Ք Պատ 1:3-8-ում տեսնում ենք աստվածային բնությունը վայելելու միջոցով գերազանց առաքինությունների զարգացումը.

Ա. «Կյանքին ու բարեպաշտությանը վերաբերող ամեն բան»-ն աստվածային կյանքի զանազան տեսանկյուններն է, որոնց նախատիպն է բարի երկրի հարստությունը՝ խ. 3.

1. Կյանքը ներսում է, որը մեզ ունակ է դարձնում ապրելու, իսկ բարեպաշտությունը՝ դրսում՝ որպես ներքին կյանքի արտաքին արտահայտությունը:
2. Կյանքը ներքին եռանդն է, ներքին ուժը, որն առաջ է բերում արտաքին բարեպաշտությունը, որը տանում է դեպի փառք, և որի արդյունքը փառքն է:
3. Հավատքը կարելի է համարել կյանքի համարովանդակ սերմը, իսկ սերը՝ պտուղը՝ իր լիարժեք զարգացմանը՝ խիս. 3, 8:
4. Ի վերջո մենք կունենանք կյանքի լիարժեք զարգացումը և հասունությունը. հավատքի սերմից, առաքինության և գիտության արմատներով, ծուժկալության բնով և համբերության ու բարեպաշտության ճյուղերով մինչև եղբայրասիրության և սիրո ծաղկելն ու պտուղը՝ խիս. 5-8: